Հինգերորդ հաղորդում

Աստվածամարդկային ապրելակերպը

Գրվածքների ընթերցում. Ղտց 1:3, 9, 6:8-13, Հվի 21:15-17,
Ա Հվի 3:14, 5:1, 2:6, 4:17, Գղտ 6:2-3, Հռմ 8:2

I. Աստծու սրտի ցանկություն այն է, որ «[իրականությունը] Հիսուսի մեջ» (Եփս 4:21)՝ Հիսուսի աստվածամարդկային ապրելակերպի փաստացի վիճակը, որը նկարագրված է չորս Ավետարաններում, իրականության Հոգու միջոցով կրկնօրինակվի Քրիստոսի Մարմնի բազում անդամների մեջ և դառնա Քրիստոսի Մարմնի իրականությունը՝ գագաթնակետն Աստծու տնտեսության մեջ (խխ. 20-24).

Ա. Չորս Ավետարանները ցույց են տալիս կյանքի այն նմուշը, որ Աստված ցանկանում է՝ կյանքի «կաղապարը», որը կարող է բավարարել Աստծուն և կատարել Նրա մտահղացումը. Հիսուսն ապրում էր մի կյանքով, որում Նա ամեն ինչ անում էր Աստծու մեջ, Աստծու հետ և Աստծու համար. Աստված Նրա ապրելակերպի մեջ էր, և Նա մեկ էր Աստծու հետ. սա «իրականությունն է Հիսուսի մեջ» արտահայտության նշանակությունն է. սովորել Քրիստոսը, ինչպես իրականությունն է Հիսուսի մեջ, նշանակում է «կաղապարվել» Քրիստոսի նմուշին, այսինքն՝ կերպարանակցվել Նրա պատկերին՝ Հռմ 8:28-29, Եփս 4:20-21:

Բ. Տերը կատարելագործում է մեզ, որպեսզի լինենք Աստվածամարդիկ, որոնք ապրում են աստվածային կյանքով՝ ուրանալով իրենց բնական կյանքը, Քրիստոսի՝ որպես առաջին Աստվածամարդու նմուշօրինակի համաձայն՝ Մտթ 11:29ա, 17:5բ, Ա Պտ 2:21.

1. Երկրի վրա Իր ապրած կյանքի ընթացքում Նա մի նմուշ հաստատեց, որը բացահայտված է չորս Ավետարաններում. ապա խաչվեց, հարուցանվեց ու կենդանարար Հոգի դարձավ, որպեսզի մեր մեջ մտնի ու մեր կյանքը դառնա. մենք Նրանից սովորում ենք ըստ Նրա օրինակի, բայց ոչ թե մեր բնական կյանքով, այլ Նրանով՝ որպես հարության մեջ եղող մեր կյանքով՝ Ա Կրթ 15:45բ, Կղս 3:4:
2. Մեր քրիստոնեական կյանքը Քրիստոսի մեջ եղող կյանք է, ինչպես նաև Քրիստոսի կյանքն է մեր մեջ. մենք Քրիստոսի՝ որպես «կաղապարի» մեջ ենք, իսկ Նա մեր մեջ է որպես մեր կյանքը. այսկերպ մենք սովորում ենք Քրիստոսը, ինչպես իրականությունն է Հիսուսի մեջ. այս իրականությունը Քրիստոսի Մարմնի իրականությունն է՝ Ա Կրթ 1:30, Բ Կրթ 5:17, 12:2ա, Կղս 1:27, Գղտ 2:20, Հռմ 8:10:

Գ. Տիրոջը սիրելով, Նրան հպվելով և Նրան աղոթելով՝ մենք ինքնաբերաբար ապրում ենք Նրան համաձայն Ավետարաններում նկարագրված «կաղապարի», կերպարի, նմուշի. այսկերպ ընդունում ենք «կաղապարի» տեսքը, այսինքն՝ կերպարանակցվում ենք դրա պատկերին. ահա թե ինչ է նշանակում Քրիստոսը սովորել՝ Մտթ 11:29, Հռմ 8:29:

Դ. Երբ ապրում ենք միաձուլված հոգում, իրականության Հոգու միջոցով սովորում ենք Քրիստոսը ինչպես իրականությունն է Հիսուսի մեջ. մենք սովորում ենք Նրանից՝ որպես մեր նմուշօրինակից, այնպես որ Նրա կենսագրությունը դառնում է մեր պատմությունը. Քրիստոսի Մարմնի՝ որպես նոր մարդու ապրելակերպը պետք է լինի ճիշտ նույնը, ինչ Հիսուսի՝ Ավետարաններում բացահայտված ապրելակերպը՝ Գղտ 6:17-18, Հռմ 1:1, 9, Եփս 4:20-24, Փլպ 2:5, Մտթ 11:29, Ա Պտ 2:21:

Ե. Աստված Տեր Հիսուսին՝ որպես մարդու, ուղարկեց այն նպատակով, որ Նա ապրեր աստվածամարդկային կյանքով աստվածային կյանքի շնորհիվ. երբ ուտում ենք Նրան, ապրում ենք Նրա շնորհիվ՝ դառնալով տիեզերական, մեծ մարդը, ով ճիշտ նույնն է, ինչ Նա է, մարդ, որ ապրում է աստվածամարդկային կյանքով աստվածային կյանքի շնորհիվ՝ Ողբ 3:22-24, 55-56, Հյտ 2:4, 7, Հվի 6:57, 63, Երմ 15:16, Եփս 6:17-18, Սղմ 119:15:

II. Միակ կյանքը, որը հաճելի է Աստծուն, այն կյանքն է, որը Քրիստոսի՝ երկրի վրա ապրած կյանքի կրկնությունն է. սա այն կյանքն է, որը փորձառաբար ապրում է Քրիստոսին Նրա՝ որպես ողջակեզի ապրումներում՝ Ղտց 1:9, Հվի 8:29, Բ Կրթ 5:9.

Ա. Ողջակեզը Քրիստոսի նախատիպն է այն իմաստով, որ Նա այնպիսի կյանքով էր ապրում, որը բացարձակորեն Աստծու համար և Աստծու բավարարության համար էր. ողջակեզը նաև Քրիստոսի նախատիպն է այն իմաստով, որ Նա կյանք է, որն Աստծու մարդկանց թույլ է տալիս նման ապրելակերպ ունենալ՝ Ղտց 1:3, Թվց 28:2-3, Հվի 5:30, 6:38, 8:29, Եբր 10:5-10:

Բ. Որպես «ողջակեզ» թարգմանված բառը նշանակում է մի բան, որը բարձրանում է, ինչը վերաբերում է Քրիստոսին (Ղտց 1:3, 10, 14). միակ բանը, որ կարող է երկրից դեպի Աստված բարձրանալ, այն կյանքն է, որ Քրիստոսն ապրում էր, որովհետև Նա եզակի անձն է, ով ապրում է բացարձակորեն Աստծու համար եղող կյանքով (Հվի 6:38):

Գ. Ողջակեզը «բավարարող անուշահոտություն [էր] Եհովայի համար» (Ղտց 1:9). որպես «բավարարող անուշահոտություն» թարգմանված եբրայերեն արտահայտությունը տառացիորեն նշանակում է «հանգստի կամ բավարարության բուրմունք». բավարարող անուշահոտությունն այն բուրմունքն է, որը բավարարություն, խաղաղություն և հանգիստ է բերում. այսպիսի բավարարող անուշահոտությունը վայելք է Աստծու համար:

Դ. Մեր ձեռքերը պատշաճ աղոթքի միջոցով Քրիստոսի՝ որպես ողջակեզի վրա դնելով՝ մենք միանում ենք Նրան, ու Նա և մենք դառնում ենք մեկ. մեր մեջ ապրելուն զուգընթաց Քրիստոսը մեր մեջ կրկնում է այն կյանքը, որը Նա ապրում էր երկրի վրա, ողջակեզի կյանքը՝ խ. 4, Ա Կրթ 6:17, Գղտ 2:20:

Ե. Այսպիսի միության, այսպիսի նույնացման մեջ Նա Իր վրա է վերցնում

մեր բոլոր տկարությունները, արատները և թերությունները՝ Բ Կրթ 5:21, Գղտ 2:20ա:

Զ. Մենք պետք է Տիրոջը թույլ տանք այրել մեզ, որպեսզի մշտական ողջակեզ լինենք, որը վառում է ուրիշներին, և վերածվենք մոխրի՝ դառնալով Նոր Երուսաղեմը Աստծու արտահայտության համար՝ Սղմ 20:3, Ղտց 1:16, 6:8-13, Ա Կրթ 3:12ա, Հյտ 3:12, 21:2, 10-11, 18-21.

1. Մոխիրը խորհրդապատկերում է ոչնչի վերածված Քրիստոսին. քանի որ մենք մեկ ենք Քրիստոսի հետ, ով մոխրի վերածվեց, մենք նույնպես մոխրի ենք վերածվում, այսինքն՝ ոչնչի, զրոյի՝ Մրկ 9:12, Եսյ 53:3, Ա Կրթ 1:28, Բ Կրթ 12:11:
2. Որքան շատ ենք նույնանում Քրիստոսի հետ Նրա մահվան մեջ, այնքան շատ ենք գիտակցում, որ մոխրի կույտ ենք դարձել. երբ մոխիր ենք դառնում, այլևս բնական մարդ չենք, այլ մարդ, որը խաչվել է, ում վերջ է դրվել և որը այրվել է՝ Գղտ 2:20ա:

Է. Մոխիրը զոհասեղանի արևելյան կողմում՝ արևածագի կողմում, դնելը հարության ակնարկն է՝ Ղտց 1:16, Հվի 11:25, Փլպ 3:10-11, Բ Կրթ 1:9.

1. Քրիստոսի՝ որպես ողջակեզի առնչությամբ մոխիրը ոչ թե վերջն է, այլ սկիզբը. մոխիրը նշանակում է, որ Քրիստոսը մահվան է մատնվել, իսկ արևելքը խորհրդապատկերում է հարությունը՝ Մրկ 9:31:
2. Որքան շատ Քրիստոսի մեջ մոխրի վերածվենք, այնքան շատ կդրվենք արևելքի ուղղությամբ , իսկ արևելքի կողմում վստահություն ունենք, որ արևը ծագելու է և մենք ապրելու ենք հարության արևածագը՝ Փլպ 3:10-11:

Ը. Ի վերջո մոխիրը դառնալու է Նոր Երուսաղեմ՝ Հյտ 3:12, 21:2, 10-11.

1. Քրիստոսի մահը մեզ վերջ է դնում, այսինքն՝ մեզ մոխրի է վերածում. և հարության մեջ մոխիրը դառնում է թանկագին նյութեր Աստծու կառույցի համար՝ Ա Կրթ 3:9բ, 12ա:
2. Երբ մոխրի ենք վերածվում, բերվում ենք Եռամեկ Աստծու փոխակերպման մեջ, ինչի շնորհիվ թանկագին նյութեր ենք դառնում Նոր Երուսաղեմի կառուցման համար՝ Հռմ 12:1-2, Բ Կրթ 3:18, Հյտ 21:18-21:

III. Աստծու նորկտակարանյան տնտեսությունն իրականացնելիս Տեր Հիսուսը՝ որպես ողջակեզի իրականությունը, ոչինչ չէր անում Իրենից (Հվի 5:19). Նա Իր սեփական աշխատանքը չէր անում (4:34, 17:4). Նա Իր սեփական խոսքը չէր խոսում (14:10, 24), Իր սեփական կամքը չէր կատարում (5:30) և Իր սեփական փառքը չէր փնտրում (7:18). Նա երբեք չէր հիասթափվում, քանի որ բավարարվում էր միայն Աստծով (Եսյ 42:4, 50:4-5, 53:2ա, հմմտ Հվի 4:13-14, 6:15, Մրկ 9:7-8):

Ա. Տիրոջ կյանքը Նրա աշխատանքն էր, Նրա շարժումը և Նրա սպասավորությունը. Նրա աշխատանքը Նրա ապրելակերպն էր, իսկ Նրա շարժումը Նրա էությունն էր. Նրա պարագայում տարբերություն չկար Նրա կյանքի, Նրա աշխատանքի, Նրա շարժման և Նրա սպասավորության

միջև. Տեր Հիսուսն ապրում էր Իր սպասավորությունը՝ հմմտ Ղկս 22:26-27, Հվի 10:10բ, Ա Կրթ 15:45բ, Ա Հվի 5:16ա, Բ Կրթ 3:6, Փլպ 1:25:

Բ. Տեր Հիսուսն աղոթքի մարդ էր. Նա մեկ էր Աստծու հետ, անդադար ապրում էր Աստծու ներկայության մեջ, չարչարանքների ու հալածանքների ցանկացած իրավիճակում ապավինում էր ոչ թե Իրեն, այլ Աստծուն, և Մեկն էր, ում մեջ Սատանան՝ աշխարհի կառավարիչը, ոչինչ չուներ (ոչ մի հիմք, ոչ մի առիթ, ոչ մի հույս, ոչ մի բանի հնարավորություն)՝ Հվի 10:30, 8:29, 14:30բ, 16:32-33, Ա Պտ 2:23.

1. Նա մարդ էր մսեղիում, ով խորհրդավոր Աստծուն աղոթում էր աստվածային ու առեղծվածային ոլորտում. Նա հաճախ լեռն էր բարձրանում կամ հեռանում էր որևէ առանձնացված վայր և աղոթում էր՝ Մտթ 14:23, Մրկ 1:35, Ղկս 5:16, 6:12, 9:28:
2. Նա երբեք մենակ չէր, քանի որ Հայրը Նրա հետ էր. Նա ամեն պահ տեսնում էր Իր Հոր երեսը՝ Հվի 5:19, 16:32, Սղմ 16:7-8:

Գ. Երբ Քրիստոսը՝ որպես Փրկիչ-Աստված, ցանկացավ փրկել սամարացի անբարոյական կնոջը, Նա Հրեաստանից Գալիլեա ճանապարհվեց Սամարիայով. Նա Սամարիա տանող գլխավոր ճանապարհից թեքվեց դեպի Սյուքար քաղաքը և Հակոբի ջրհորի մոտ՝ Սյուքարից ոչ հեռու, սկսեց սպասել մինչև որ սամարուհին գար այդտեղ, որպեսզի փայփայեր նրան՝ նրանից խմելու բան խնդրելով, որպեսզի սնուցեր նրան կյանքի ջրով, որը հոսող Եռամեկ Աստված Ինքն է՝ Հվի 4:3-14:

Դ. Երբ մեղադրող փարիսեցիներից ոչ ոք չկարողացավ դատապարտել շնացող կնոջը, Քրիստոսը՝ որպես Իր մարդկայնության մեջ եղող Փրկիչ-Աստված, նրան ասաց. «Ես էլ քեզ չեմ դատապարտում», որպեսզի փայփայեր նրան, այնպես որ Նա՝ որպես մեծ «Ես Եմ»-ը, կարողանար սնել նրան մեղքից ազատությամբ և նրան հնարավորություն տար «այլևս չմեղանչելու»՝ 8:3-11, 24, 34-36:

IV. Երբ մենք հարակայում ենք այն սիրո մեջ, որ Աստված Ինքն է, սերը «մեզ հետ կատարյալ է դարձվել, որպեսզի դատաստանի օրը համարձակություն ունենանք, որովհետև ինչպիսին որ Նա է, այդպիսին էլ մենք ենք այս աշխարհում» (Ա Հվի 4:17)՝ Քրիստոսը՝ որպես ողջակեզի իրականությունը, ապրում էր այս աշխարհում Աստծու՝ որպես սիրո կյանքով, և Նա այժմ մեր կյանքն է, որպեսզի մենք սիրո նույն կյանքով ապրենք այս աշխարհում և լինենք նույնը, ինչ Նա է (3:14, 5:1, 2:6).

Ա. Մեր հոգում եղող կյանքի Հոգու օրենքը Քրիստոսի օրենքն է՝ որպես սիրո օրենք (Հռմ 8:2, Գղտ 6:2-3). սիրո օրենքը պետք է սատարվի կյանքի Հոգու օրենքով, որպեսզի կարողանանք կրել միմյանց հոգսերը. բայց եթե լցված ենք հպարտությամբ, անկարող կլինենք կրելու ուրիշների հոգսերը, որովհետև մենք խաբում ենք մեզ՝ կարծելով, թե ինչ-որ բան ենք՝ ոչինչ լինելով (խ. 3):

Բ. Երբ սիրո օրենքը գործարկվում է մեր ներսում, մենք ինքնաշխատ ու ինքնաբերական կերպով դառնում ենք հովիվներ, որոնք ունեն մեր Հայր

Աստծու սիրող ու ներող սիրտը և մեր Փրկիչ Քրիստոսի հովվող ու փնտրող հոգին՝ Հվի 21:15-17, Ղկս 15:3-7:

Գ. Երբ սիրո օրենքը գործարկվում է մեր ներսում, Տիրոջ մեջ մեր տքնանքը սիրո տքնանք է լինում (Ա Կրթ 15:58, Ա Թսղ 1:3), որում «օժանդակում ենք տկարներին» (Գրծ 20:35) և «սատարում ենք տկարներին» (Ա Թսղ 5:14). «տկարներ»-ը նրանք են, ովքեր տկար են կա՛մ հոգով, կա՛մ շնչով, կա՛մ մարմնով, կա՛մ էլ տկար են հավատքով (Հռմ 14:1, 15:1):

Դ. Իր հարությունից հետո Տերը հովվում էր Պետրոսին ու նրան հանձնարարեց կերակրել Իր գառներին ու հովվել Իր ոչխարներին. սա առաքելական սպասավորությունը ներառելն էր Քրիստոսի երկնային սպասավորության մեջ՝ Աստծու հոտի համար հոգալու նպատակով, այսինքն՝ եկեղեցու, որի արդյունքը Քրիստոսի Մարմինն է, որն ավարտունանում է Նոր Երուսաղեմում՝ Աստծու հավիտենական տնտեսությունն իրագործելու համար՝ Հվի 21:15-17:

© 2023 Living Stream Ministry